ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 30 >> մարտի 2015 թվականի N 45-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 462-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով, որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2009 թվականի դեկտեմբերի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Մարալիկի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությանը կից սոցիալական աջակցության խորհրդի անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2007 թվականի ապրիլի 27-ի թիվ 211 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 462-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2015 թվականի
մարտի 30 -ի N 45 -Ա որոշման

<<Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2009 թվականի
դեկտեմբերի 15-ի N 462-Ա որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄԱՐԱԼԻԿԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Խաչատրյան Զորիկ - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ.

Յուզբաշյան Սաթենիկ - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքապետարանի աշխատակազմի տեղեկատվության պատասխանատու /համաձայնությամբ/.

Ուռուտյան Էդիկ - Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Մարալիկի սոցիալական ապահովության տարածքային բաժնի գլխավոր մասնագետ.

Ղազարյան Գոհար - Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության Մարալիկի զբաղվածության տարածքային կենտրոնի գլխավոր մասնագետ.

Գևորգյան Լյուբա - <<Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա>> հասարակական կազմակերպության Մարալիկի մասնաճյուղի անդամ /համաձայնությամբ/:>>:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ.ՊՈՂՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝